ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հուլիսի 2022 թվականի N 530-Ա

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱՄՈՅԱՆԻՆ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1.ՀՀ Տաշիր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Քաղաքացի Ալեքսանդր Ամոյանը, հանդիսանալով գույքահարկ վճարող սուբյեկտ, իրավահարաբերության պահին գործող «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով չի կատարել գույքահարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2022 թվականի հունիսի 20-ին « Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ գույքահարկի գանձման հարցի քննության նպատակով: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ օբյեկտիվ քննության արդյունքում բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտը ընդունելու հիմք հանդիսացող փաստերը.

Համաձայն Տաշիրի համայնքապետարանի ֆինանսական,հաշվապահական հաշվառման,եկամուտների գանձման և հավաքագրման բաժնի կողմից տրված և իրավահարաբերության պահին գործող « Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով սահմանված գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող ՀՀ Ոստիկանության ՃՈ կողմից տրամադրված փոխադրամիջոցների հաշվառման և գնահատման տվյալների՝ քննարկվող շարժական գույքեր Տաշիր համայնքում հաշվառված VAZ21063 մակնիշի, 35AO600 հերթական համարանիշի փոխադրամիջոցը հանդիսանում է քաղաքացի Ալեքսանդր Ամոյանի սեփականությունը,որը իրավահարաբերության պահին գործող « Գույքահարկի մասին» ՀՀ օրենքով հանդիսանում է հարկվող օբյեկտ:

Նշված փոխադրամիջոցի համար 2018-2020 թվականների համար վճարման ենթակա գույքահարկը կազմում է 27.793 (քսանյոթ հազար յոթ հարյուր իննսուներեք) ՀՀ դրամ, որից 20.700 (քսան հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ՝ որպես ապառք, 7.093

(յոթ հազար իննսուներեք) ՀՀ դրամ՝ որպես պարտականությունը չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ:

2022 թվականի հունիսի 20-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի առաջին մասի «բ» կետի հիմքով հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2022 թվականի հուլիսի 11-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է քաղաքացի Ալեքսանդր Ամոյանը (հիմք՝ փոստային անդորրագիր 01.07.2022) : Ալեքսանդր Ամոյանը չի ներկայացել վարչական վարույթի լսումներին:

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, կատարել պարտադիր այլ վճարումներ: Համաձայն իրավահարաբերության պահին գործող «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի՝ գույքահարկը սեփականության իրավունքով նշված օրենքի երրորդ հոդվածում նշված անձանց պատկանող հարկվող օբյեկտ համարվող գույքի համար սույն օրենքով սահմանված կարգով և չափով համապատասխան բյուջեներ վճարվող ուղղակի հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից: Համաձայն իրավահարաբերության պահին գործող «Գույքահարկի մասին»ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և համամասնությամբ, գույքահարկի գումարը վճարվում է համայնքի վարչական տարածքում հաշվառված փոխադրամիջոցների համար հարկվող օբյեկտի հաշվառման վայրի համայնքի բյուջե: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի՝ հարկի վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված հարկի գումարի 0.04 տոկոսի չափով: Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի ՝ համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով կազմակերպում է գույքահարկի գանձումը: Հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի, «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ,ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ,«Վարչարարության հիմունքների և վարչակական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Քաղաքացի Ալեքսանդր Ամոյանից հօգուտ Տաշիր համայնքի բյուջե գանձել 27.793 (քսանյոթ հազար յոթ հարյուր իննսուներեք) ՀՀ դրամ՝ որպես Տաշիր համայնքում հաշվառված VAZ21063 մակնիշի, 35AO600 հերթական համարանիշի փոխադրամիջոցի համար վճարման ենթակա գույքահարկի գումար, որից 20.700 (քսան հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ՝ որպես ապառք, 7.093 (յոթ հազար իննսուներեք) ՀՀ դրամ՝ որպես պարտականությունը չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ:

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Տաշիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով ՀՀ վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

3.Սույն որոշման պահանջները կամովին չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում.

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Տաշիր համայնքի ղեկավարը:

5. Որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման մասին օրենքով սահմանված կարգով իրազեկման հաջորդ օրվանից:

6. Գույքահարկը պետք է վճարվի ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության Տաշիրի համայնքապետարանի 900275081025 հաշվարկային հաշվին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2022թ. հուլիսի 11
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հուլիսի 2022 թվականի N 531-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ԳԱՐԻԿ ԴԱԼԱԼՈՅԱՆ»-Ի՝Ն ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «Գարիկ Դալալոյան»-ի 2022 թվականի հուլիսի 12-ի N63 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետությանօրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, Երևանյան փողոց, թիվ 132 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր «Գարիկ Դալալոյան»-ի հայտը բավարարել և նրան տալ 2022 թվականի երրորդ եռամսյակի համար ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:

2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2022թ. հուլիսի 12
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հուլիսի 2022 թվականի N 532-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ԱՐՓԻՆԵ ԴԱԼԱԼՈՅԱՆ»-Ի ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «Արփինե Դալալոյան»-ի 2022 թվականի հուլիսի 12-ի N64 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գ. Լեռնահովիտ, 5-րդ փողոց, թիվ 6/1 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր «Արփինե Դալալոյան»-ի հայտը բավարարել և նրան տալ 2022 թվականի երրորդ եռամսյակի համար ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:

2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2022թ. հուլիսի 12
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հուլիսի 2022 թվականի N 533-Ա

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-099-0010-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Շալիկո Շուրիկի Աղաջանյանի 11.04.2022 թվականի թիվ ՄԴ-197-22 դիմումը, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2022 թվականի մարտի 10-ի ԼԴ1/2048/02/21 16.03.2022 թվականի քաղաքացիական գործով վճիռը, «Արտյում Սաքանյան» ԱՁ-ի կողմից կազմված հողամասի և շինությունների հատակագծերը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 25-ի N2387-Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի 1) ենթակետը, 50-րդ, 51-րդ, 60-րդ կետերը և 62-րդ կետը և ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2021թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում 2021 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին» N 93-Ն որոշումը, նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 16.06.2005թ.-ի 1012-Ն Լոռու մարզի Սարատովկա համայնքին անհատույց փոխանցվող հողերի մասին որոշումը՝ 06-099-0010-0001 կադաստրային ծածկագրով 0,11853 հա հողամասը և կառուցված արտադրական նշանակության 1020,22քմ շինությունները չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված և ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Ճանաչել Շալիկո Շուրիկի Աղաջանյանի և Սոնիկ Սեյրանի Աղաջանյանի ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գյուղ Սարատովկա թիվ 1 փողոց, թիվ 23 (կադաստրային ծածկագիր՝ 06-099-0010-0001) հասցեում գտնվող 0,11853 հա մակերեսով արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասի նկատմամբ:

2. Հողամասի սահմանները որոշվում են Տաշիր համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

3. Ճանաչել Շալիկո Շուրիկի Աղաջանյանի և Սոնիկ Սեյրանի Աղաջանյանի ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գյուղ

Սարատովկա, թիվ թիվ 1 փողոց, թիվ 23 (կադաստրային ծածկագիր՝ 06-099-0010-0001) հասցեում գտնվող 0,11853 հա հողամասի և կառուցված արտադրական նշանակության 1020,22քմ շինությունների նկատմամբ՝ համաձայն «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից կազմված հատակագծի:

4. Հողամասին տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գյուղ Սարատովկա, թիվ 1 փողոց, թիվ 23 (փոստային դասիչ՝ 2106) հասցեն:

5.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի 900275081108 հաշվեհամարին մուծել 1000 (մեկ հազար) ՀՀ դրամ տեղական տուրք՝ անասնաշենքի վերահասցեավորման համար:

6. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2022թ. հուլիսի 12
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հուլիսի 2022 թվականի N 534-Ա

ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԳԻՐԵՐԸ ԿՈՂՄԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՄԲ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 1-ին մասով,«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով 2019 թվականի նոյեմբերի 13-ին կնքված խոտհարքերից օգտվելու պայմանագրի 17-րդ կետի 2-րդ ենթակետը և Մխիթար Սուրենի Սիրականյանի դիմումը (մուտք՝ 2022 թվականի հուլիսի 12-ի, ՄԴ-380-22)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Կողմերի համաձայնությամբ լուծել ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի և Մխիթար Սուրենի Սիրականյանի միջև 2022 թվականի հունիսի 3-ին կնքված արոտավայրից օգտվելու պայմանագիրը (կադաստրային ծածկագիր՝ 06-032-0212-0023, 83,6 հա մակերեսով):

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2022թ. հուլիսի 12
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հուլիսի 2022 թվականի N 535-Ա

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետը, 50-րդ, 51-րդ, 60-րդ կետերը և 62-րդ կետը և ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում 2022 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին» N93-Ն որոշումով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Տաշիր համայնքի վարչական տարածքում գտնվող Տիգրան Նորիկի Իսպիրյանին սեփականության իրավունքով պատկանող գույքին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայական՝ 2204987 տրված՝ 16.02.2007-ին) ՀՀ Լոռու մարզ, Մեդովկա համայնք անհատական բնակելի տուն հասցեի փոխարեն տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գյուղ Մեդովկա 1-ին փողոց, թիվ 12 բնակելի տուն (փոստային դասիչ՝ 2111) հասցեն:

2.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի 900275081108 հաշվեհամարին մուծել 1000 (մեկ հազար) ՀՀ դրամ տեղական տուրք՝ բնակելի տան վերահասցեավորման համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2022թ. հուլիսի 12
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հուլիսի 2022 թվականի N 536-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ՍԻՆԱՄ ԲԱՐՍԵՂՅԱՆ»-Ի՝ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «Սինամ Բարսեղյան»-ի 2022 թվականի հուլիսի 12-ի N65 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գյուղ Լեռնահովիտ, հրապարակ թիվ 5 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր «Սինամ Բարսեղյան»-ի հայտը բավարարել և նրան տալ 2022 թվականի երրորդ եռամսյակի համար ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:

2.Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2022թ. հուլիսի 12
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հուլիսի 2022 թվականի N 537-Ա

ՎԱՀԱՆ ՎԱԶԳԵՆԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշումով և հիմք ընդունելով քաղաքացի Վահան Վազգենի Գրիգորյանի դիմումը (մուտք՝ 12.07.2022-ի. ՄԴ-383-22)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Քաղաքացի Վահան Վազգենի Գրիգորյանին տրամադրել ՀՀ Լոռու մարզ, համայնք Տաշիր ք. Տաշիր; Գ. Ջահուկյան փողոց, թիվ 1/1 հասցեում գտնվող անասնաշենքին կից ծածկարանի շահագործման թույլտվություն:

2. Վահան Վազգենի Գրիգորյանին՝ ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի 900275081207 հաշվեհամարին մուծել 15000 (տասնհինգ հազար) դրամ տեղական վճար՝ շահագործման թույլտվության համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2022թ. հուլիսի 12

ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հուլիսի 2022 թվականի N 538-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ՎԱՀԱՆ ՄԽՈՅԱՆ»-ԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «Վահան Մխոյան»-ի 2022 թվականի հուլիս 13-ի N64 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45 -րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, Երևանյան փողոց, թիվ 129 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր «Վահան Մխոյան»-ի հայտը բավարարել և նրան տալ 2022 թվականի երրորդ եռամսյակի համար ոգելից, ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:

2.Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2022թ. հուլիսի 13
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հուլիսի 2022 թվականի N 539-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-Ի N501-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայատանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարի 2022 թվականի հուլիսի 1-ի «Անշարժ գույքի հասցեավորման մասին» N 501-Ա որոշման «06-008-0209-0001» թվերը փոխարինել «06-008-0277-0003» թվերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2022թ. հուլիսի 14
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հուլիսի 2022 թվականի N 540-Ա

ԼԱՐԻՍԱ ԱՐԱՄԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՐՀԵՍՏԱՆՈՑԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լարիսա Արամի Կիրակոսյանի դիմումը (մուտք՝ 07. 07 . 2022, ՄԴ364-22), անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 02062016-06-0028 վկայականը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի «Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառական նշանակությունը փոփոխելու կարգը հաստատելու մասին» N88 որոշումով՝

ՈՐՇՈՒՄ ԵՄ ՝

1. Լարիսա Արամի Կիրակոսյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ սեփականության իրավունքի գրանցման վկայական թիվ 02062016-06-0028) Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Երևանյան փողոց, 14-րդ թաղամաս, թիվ 377 հասցեում գտնվող շինության գործառնական նշանակությունը «արհեստանոց»-ից փոխել «բնակելի տուն» գործառնական նշանակության:

2. Առաջին կետում նշված բնակելի տունը հաշվառել համայնքի բնակարանային ֆոնդում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2022թ. հուլիսի 14
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 հուլիսի 2022 թվականի N 541-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ԳԱՅԱՆԵ ԳԱՍՊԱՐՅԱՆ»-ԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «Գայանե Գասպարյանի»-ի 2022թվականի հուլիսի 15-ի N65 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45–րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, Բաղրամյան փողոց, թիվ 19Ա հասցեում գործող անհատ ձեռնարկատեր «Գայանե Գասպարյան»-ի հայտը բավարարել և նրան տալ 2022 թվականի երրորդ և չորրորդ եռամսյակների համար ոգելից, ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:

2.Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2022թ. հուլիսի 15
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 հուլիսի 2022 թվականի N 542-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳԵՐԱՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՆՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2020 թվականի օգոտոսի 3-ի «Չափից ավելի վճարված անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցների գույքահարկի գումարների հաշվանցման և (կամ) վերադարձի կարգը սահմանելու մասին» N 920-Ն որոշումով և հիմք ընդունելով Դավիթ Ապարի Գալստյանի դիմումը (մուտք՝13.07.2022-ի ՄԴ 386)

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Դավիթ Ապարի Գալստյանին սեփականության իրավունքով պատկանող, Տաշիր համայնքում հաշվառված 0,137 հա տնամերձ հողամասի հողի հարկի գերավճարը՝ 3000 (երեք հազար) դրամը հաշվանցել և մարել Դավիթ Ապարի Գալստյանին սեփականության իրավունքով պատկանող, Տաշիր համայնքում հաշվառված անշարժ գույքի գծով առկա հարկային պարտավորությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2022թ. հուլիսի 15
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 հուլիսի 2022 թվականի N 543-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳԵՐԱՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՆՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2020 թվականի օգոստոսի 3-ի «Չափից ավելի վճարված անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցների գույքահարկի գումարների հաշվանցման և (կամ) վերադարձի կարգը սահմանելու մասին» N920-Ն որոշումով և հիմք ընդունելով Արթուր Հարութի Հարությունյանի դիմումը (մուտք՝ 14.07.2022-ի ՄԴ 387) ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ ՝

1. Արթուր Հարութի Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող, Տաշիր համայնքում հաշվառված 2,347 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողի հողի հարկի գերավճարը՝ 8500 (ութ հազար հինգ հարյուր) դրամը հաշվանցել և մարել Արթուր Հարութի Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող, Տաշիր համայնքում հաշվառված անշարժ գույքի գծով առկա հարկային պարտավորությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2022թ. հուլիսի 15
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 հուլիսի 2022 թվականի N 544-Ա

ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԵՐԱՎՃԱՐԻ ՎԵՐԱԴԱՐՁ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2020 թվականի օգոստոսի 3-ի «Չափից ավելի վճարված անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցների գույքահարկի գումարների հաշվանցման և (կամ) վերադարձի կարգը սահմանելու մասին» N920-Ն որոշումով և հիմք ընդունելով Վարդան Աշոտի Նարգիզյանի դիմումը (մուտք՝ 14.07.2022-ի ՄԴ389)
՝

ՐՈՇՈՒՄ ԵՄ ՝

1.Վերադարձնել Վարդան Աշոտի Նարգիզյանին սեփականության իրավունքով պատկանող, Տաշիր համայնքում հավաքված և օտարված Մերսեդես Բենց ՑԼՍ 350 (Mercedes-Benz CLS350) մակնիշի 36MO757 պետհամարանիշի ավտոմեքենայի գերավճարը՝ 53750 (հիսուներեք հազար յոթ հարյուր հիսուն) դրամը, առևտրային բանկում Վարդան Աշոտի Նարգիզյանի անվամբ բացված տարանցիկ հաշվի համարին՝ անձը հաստատող փաստաթղթի տվյալներով փոխանցելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2022թ. հուլիսի 15
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 հուլիսի 2022 թվականի N 545-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառվարման մասին » Հայաստանի Հնարապտության օրենքի 41-րդ հոդվածքի 1-ին մասի 7-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 2021թ. դեկտեմբերի 13-ի « Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի արտկարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակրգերի նախապատրաստման 2022 թվականի հիմնական միջոցառումների պլանը հաստատելու մասին» թիվ 831-Ա որոշումը և այն, որ 2022 թվականի օգոստոսի 11-ին ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքում անցկացվելու է «Անտառային հրդեհների հրդեհաշիջման կազմակերպում» թեմայով շտաբային ուսումնավարժություն

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Տաշիր համայնքի ղեկավարի տեղակալ Նորայր Մարգարի Բաղդասարյանին նշանակել Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ:
Շտաբը կազմավորել համայնքային ծառայությունների բազայի վրա:

2. Ուսումնավարժությունում ընդգրկել համայնքի ղեկավար կազմին, համայնքային տրանսպորտային և կապի, ինժեներական և կոմունալ-տեխնիկական միասնական ծառայությունների, բժշկական, առևտրի և սննդի, էներգետիկայի, բույսերի և կենդանիների, հասարակական կարգի, նյութատեխնիկական մատակարարման , բնակչության հատուկ սպասարկումների ծառայություններին:

3. Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետին՝

1) մշակել և մինչև օգոստոսի 1-ը իմ հաստատմանը ներկայացնել ուսումնավարժության նախապատրաստման և անցկացման փաստաթղթերը և ապահովել պլանով նշված միջոցառումների սահմանված ժամկետներում կատարումը,

2)համայնքային ծառայությունների ու կազմավորումների ղեկավարների հետ անցկացնել տեսական պարապմունքներ, շտաբային վարժանքներ,
3) ուսումնավարժության անցկացման ընթացքում ապահովել իրավիճակի մասին

տեղեկությունների ժամանակին ընդունումը, ամփոփումը, գնահատումն ու շահագրգիռ մարմիններին հասցնումը,

4) նախապատրաստել ղեկավարման կետը,

5) ուսումնավարժության անցկացմանը պատրաստ լինելու մասին ինձ զեկուցել մինչև օգոստոսի 9-ը:

4.Համայնքային ծառայությունների պետերին՝

1) ուսումնասիրել և ճշգրտել ծառայությունների պլաններն ու խնդիրները: Ակտիվորեն համագործակցել ուսումնավարժության ղեկավարման շտաբի հետ,

2) տրանսպորտային և կապի միասնական ծառայության պետին ՝ ապահովել կայուն և անխափան կապ ծառայությունների ու կազմավորումների հետ և պատրաստ վիճակի բերել առկա տրանսպորտային միջոցները՝ անտառային հրդեհների դեպքում բնակչության պաշտպանության կազմակերպման և հետևանքների վերացման նպատակով.

3) բժշկական ծառայության պետին՝ ճշգրտել ծառայության խնդիրներն ու դրանց լուծման կարգը,

4) բույսերի և կենդանիների պաշտպանության ծառայության պետին՝ ճշգրտել ծառայության խնդիրները՝ անտառային հրդեհների դեպքում բնակչության պաշտպանության կազմակերպման և հետևանքների վերացման նպատակով,

5) հասարակական կարգի պահպանման ծառայթայն պետին՝ անտառային հրդեհների դեպքում բնակչության պաշտպանության կազմակերպման և հետևանքների վերացման նպատակով ճշտել ծառայության խնդիրները, պատրաստ վիճակի բերել ծառայության միջոցները,

6) ինժեներական և կոմունալ-տեխնիկական միասնական ծառայության պետին՝ պատրաստ վիճակի բերել առկա տրանսպորտային միջոցները անտառային հրդեհների բնակչության պաշտպանության կազմակերպման ր հետևանքների վերացման նպատակով,
7) առևտրի և սննդի ծառայության պետին՝ ճշգրտել ծառայության խնդիրներն ու դրանց լուծման կարգը, արձագանքող ուժերին սննդով և ՎՔՆ-ով ահովելու համար:

5. Ուսումնավարժությունների ղեկավարումն իրականացնել համայնքի կառավարման կետից:

6. Ուսումնավարժությունների անցկացման հսկողությունը թողնում եմ ինձ վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2022թ. հուլիսի 15
ք.Տաշիր